

ԿԻՆԵՐՈՒԽՆ ԲԱԺԻՆԸ

Կ Ի Ն Ը

II — ԿԻՆԸ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՑՈՎ

Մանօթացած ըլլալով կնոջ սեռային գործարաններուն, այժմ անցնինք անոնց բնախօսական գործունէլութեան:

Ստինքները կաթի գործարաններ են: Այդ բաղադրեալ գեղձերուն մէջ արտադրուած կաթը արտածոր խողովակներու միջոցաւ կը հոսի գէպի պառւկը, անկէ ծծուելու համար երախային կողմէ:

Մօր կաթը կը պարունակէ 8% շաքար, 4% սեր եւ 4% պանիր, քիչ մը աղ, կենսանիւթեր (վիթամին) եւ ջուր:

Մեծ ու փոքր շրթները իգափողին եւ ծիլին պահապաններն են: Իգափողը մերձեցումի ատեն կ'ընդունի սերմը: Այս խողովակին հանգանանքը թթուային է, վիճակ մը որ արգանդին պարանոցը մանրէներուն ներխուժումէն զերծ կը պահէ:

Մերձեցումի ատեն արգանգը կը պրկուի եւ կաթիլ մը սերմ կը ծծէ ներս: Մերձմահեղուկին սերմակենդանին՝ կնոջ ձուին հետ միանալի յետոյ՝ կը կազմէ սազմը, որ կ'աճի արգանդին մէջ մինչեւ ծննդաբերքի օրը:

Արբունքէն յետոյ, արգանգը ամոէ ամիս դաշտանի ծնունդ կուտայ: Արգանդին պատերէն արիւն կը խուժէ քանի մը օր եւ յետոյ կը դադրի:

Զուարաններէն եւ ուրիշ ներքնահոս գեղձերէն արտադրուած նիւթի մը արդիւնքն է դաշտանը, որ ուրիշ կենդանիներու մէջ բնաւ չ'երեւիրի կազիկները միայն դաշտանի մօտեցող վիճակի մը կ'ենթարկուին:

Զուարաններուն գլխաւոր պաշտօնն է ձուարձակումը, այսինքն հաւակիթ ածել: Գործողութիւն մը որ ամէն դաշտանի ատեն կամ քիչ առաջ կը կատարուի:

Բացի ձուարձակումէ, ձուարանը ունի ներքնածոր արտադրութիւն մը, նիւթ մը, որ ուղղակի արեան խառնուելով՝ կնոջ կուտայ իգական շնորհքն ու հմայքը, միանգամայն կառավարելով դաշտանին ու ստինքներուն գործունէութիւնը:

Արձակուած կամ ածուած հաւակիթը մալլոպեան խողովակներէն գէպի արգանգը կը ճամբորգէ:

Կնոջ ձուն երբեմն զոյդ գեղնուց (կորիզ) կ'ունենայ: Երկուորեակներուն բացատրութիւնը այսպէս կը տրուի: Որոշ արդիքէ մը ետքը ձուարանները կը դադրին ածելէ: Այդ ատեն դաշտանն ալ կը դադրի, կնոջ հոգեկան վիճակը ցնցումներու ենթարկելով:

Կիներուն սեռային զգացումին աւելի կամ պակաս ըլլալը կախում ունի ձուարաններուն, վահանագեղձին եւ ուրիշ ներծորային գեղձերու աւելի կամ նոււազ արտադրութենէն եւ սեռային գործարաններու անթերի կամ թերի զարգացումէն:

III — ԿԻՆԸ ԱՌՈՂՋԱՎԱՀԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՑՈՎ

Կինը մայրէն զանազանել շատ գժուար է: Հետեւաբար կնոջ առողջարանութեան կցելու է յլութեան կամ մայրութեան առողջարանութիւնն ալ:

Կոյս աղջիկները պէտք է հոգ տանին իրենց արտաքին սեռային գործարաններուն մաքրութեան Շաբաթը երեք անգամ օճառով եւ գաղջ ջուրով պէտք է լաւ մը լոււալ զանոնք: Դաշտանի ատեն շատ մաքուր լաթեր գործածելու է, որպէսզի իգափողէն ներս չխուժեն մանրէները:

Ամուսնացած՝ կիները արտաքին մաքրութենէն զատ՝ իգափողը մաքրելու են շաբաթը 1—2 անգամ գրեխով (շիրինկա): Գրեխով ներարկուելիք ջուրը եռացած եւ ապա գաղջացած ըլլալու է: Զօրաւոր հականնեխականներուն գործածութիւնը ներելի չէ: Քիլո մը ջուրին մէջ երկու թէյի գգալ աղ հալեցնելով զրեխ ընելու է: Գրեխը ընելու համար անողին վրայ պառկելու է եւ ոչ թէ նսաելու, եւ գրեխին ամանը երեք ոտք (մէկ մեդր) բարձրութենէ կախելով՝ թողելու է, որ ջուրը հոսի իգափողէն ներս: Ճերմակահոսութեան մասին կը խօսինք յետոյ:

Մահմետականները շատ առողջապահիկ սովորութիւններ ունին: Մահմետական կիները միզեկ ետք կը լոււան իրենց արտաքին գործարանները: Հետեւելու է անսոնց օրինակին:

Կնոջ միզանցքը կարճ է եւ այդ պատճառաւ մէզի կաթիւներ կը սրսկուին փոքր լրթներուն եւ իգափողի գաւիթին շուրջը: Պէտք է լոււալ մէզի կաթիւները, որոնք մնալով գէշ հոտ կ'արձակեն եւ քերուըրուք կը պատճառեն: Հոս տեղն է յիշել թէ հայ կինը շատ ծոյլ է իր սեռային գործարաններուն մաքրութեան մէջ: Իբր տասներկու տարուան բժիշկ՝ կը հաստատեմ այս կարծիքս:

Դաշտանի ատեն գրեխով ներարկումներ ընելու չէ, այլ արտաքին մաքրութեամբ բաւականանալու է: Նաեւ պաղ լոգանք կամ լման բաղնիք առնելու չէ:

Դաշտանի ատեն զուգաւորումը վնասակար է: Յղի մեալու համար մերձեցումի նպաստաւոր ժամանակն է դաշտանէն անմիջապէս առաջ եւ մաքրուելէն յետոյ:

Ստինքները նեղ կրծկալներով եւ սեղմիրաններով չարչարելու չէ: Ցցուն պատկներով օժառուած խոշոր ստինքները կնոջ մը և մօր մը համար անգին գանձեր են:

Բժ. Ա. ԱԲԷԼԵՍՆ